ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվի հոկտեմբերի 5—7 օրերին Մայր Աթոռում հանդիսավոր իրադրության մեջ նշվեց ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյա հոբելյանը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա-ը Իր 16 հունվար 1973 թվակիր հմր. 743 կոնդակով 1973 թվականը հայտարարել է ս. Ներսես Շնորհալուն նվիրված հոբելյանական տարի:

Հայրապետական հրահանգի համաձայն և Գերագույն հոգևոր խորհրդի որոշումով Մայր Աթոռում ստեղծվեց հոբելյանական հանձնախումբ, որի կազմում ընդգրկվեցին Գերագույն հոգևոր խորհրդի անդամ պրոֆ. Առաքել Առաքելյանը, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանը, հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը և Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը որոշեց ս/թ. դեկտեմբեր ամսվա համարը նվիրել ս. Ներսես Շնորհալուն, ինչպես նաև Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի հետ գործակցաբար պատրաստել, անգլերեն լեզվով, հոբելյանական մի գիրք՝ քույր եկեղեցիներին և քրիստոնյա աշխարհին ծանոթացնելու համար անունը, գործը և բազմաժանր մատենագրական վաստակը հայ եկեղեցու մեծ վարդապետի:

Հոբելյանական հանձնախումբը պարտավորվեց արժանավայել կերպով կազմակերպել Մայր Աթոռում հոբելյանական հանդիսությունների անցկացումը:

Հանդիսություններին մասնակցելու համար Մայր Աթոռ էին ժամանել

Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ տ. Եղիշե արք. Տերտերյանը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը՝ ուղեկցությամբ տ. Գյուտ ծ. վրդ. Նագաշյանի, ԱՄՆ-ի արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, ԱՄՆ-ի արևմտյան թեմի առաջնորդ տ. Վաչե եպս. Հովսեփյանը՝ ընկերակցությամբ Կալիֆոռնիայի թեմական խորհրդի անդամ պրն. Սարգիս Սիմոնյանի, Դամասկոսի թեմի առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը՝ ընկերակցությամբ Դամասկոսի ազգային-քաղաքական ժողովի փոխ-ատենադպիր Արմենակ Օհանյանի, տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը (Լոնդոն), տ. Ժիրայր վրդ. Թաշճյանը (Կանադա):

Հանդիսություններին մասնակցեցին նաև ներքին թեմերի առաջնորդներ՝ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի հայոց առաջնորդ տ. Պարգև եպս. Գևորգյանը՝ ընկերակցությամբ Ռոստովի հոգևոր հովիվ տ. Հովսեփ աբեղա Հակոբյանի, վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը, Ադրբեջանի հայոց առաջնորդ տ. Վահան եպս. Տերյանը՝ ընկերակցությամբ Բաքվի հայոց հոգևոր հովիվ տ. Վարդան աբեղա Դիլանյանի, և այլ հոգևորականներ:

Հոկտեմբերի 5-ին, ուրբաթ օրը, ժամը 18-ին, ս. Հռիփսիմե տաճարում տեղի է ունենում հանդիսավոր Հսկումի արարողություն՝ նվիրված ս. Ներսես Շնորհալու հիշատակին: Ժամերգության ավարտին Վեհափառ Հայրապետը Իր քարոզի մեջ ոգեկոչում է հիշատակը և վաստակը ս. Շնորհալի Հայրապետի:

Հոկտեմբերի 6-ին, շաբաթ օրը, Մայր տաճարում տեղի է ունենում երեկոյան հանդիսավոր ժամերգություն, որի ավարտին ս. Ներսես Շնորհալու հիշատակին նվիրված իր սրտի խոսքն է ասում տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը:

Վերջում ս. Ներսես Շնորհալու մի շարք երգերի կատարումով հանդես է գալիս Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախումբը՝ գեղարվեստական ղեկավարությամբ Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Էմմա Ծատուրյանի:

Հոկտեմբերի 7-ին, կիրակի օրը, ժամը 11-ին, Մայր տաճարում տեղի է ունենում հանդիսավոր պատարագ: Իր անդրանիկ եպիսկոպոսական պատարագն է մատուցում տ. Գյուտ եպս. Նագաշյանը: «Հայր Մեր»-ից առաջ տ. Վաչե եպս. Հովսեփյանը ընթերցում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ ս. Ներսես Շնորհալուն նվիրված կոնդակը:

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունենում ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին նվիրված հանդիսավոր երեկո՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և ներկայությամբ Երուսաղեմի հայոց պատրիարք տ. Եղիշե արքեպ. Տերտերյանի:

Հանդիսությանը ներկա է լինում Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը:

Ս. Ներսես Շնորհալու տոնակատարության հոբելյանական հանձնախմբի անունից բացման խոսք է ասում տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Ս. Ներսես Շնորհալու կյանքին ու մատենագրական վաստակին նվիր-

ված ծավալուն և բովանդակալից բանախոսությամբ հանդես է գալիս հոգևոր ճեմարանի դասախոս Պարգև Շահբազյանը:

Ողջույնի խոսքեր են արտասանում ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը և տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Վերջում օրհնության խոսք է ասում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Ապա գործադրվում է խնամված ու ճոխ գեղարվեստական մի ծրագիր:

Կատարվում են ս. Ներսես Շնորհալու ստեղծագործությունները:

Գեղարվեստական ծրագրին մասնակցում են Հայաստանի հանրահայտ արվեստագետներ Գոհար Գասպարյանը, Լուսինե Զաքարյանը, Սիրվարդ Մեսրոպյանը (ասմունքող), Զարեհ Սահակյանցը՝ իր լարային նվագախմբով, Էմմա Ծատուրյանը՝ իր հայտնի երգչախմբով, և արվեստի այլ վարպետներ:

Հանդիսությանց հաջորդող օրերին Մայր Աթոռ ժամանած բարձրաստիճան հյուրերը ուխտագնացության են մեկնում դեպի Հայաստանի տարբեր վայրերում գտնվող պատմական հուշարձանները՝ ս. Գեղարդ, Խորվիրապ, Բջնի և Տաթևի պատմական ս. վանքը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

12-ը հոկտեմբերի 1973 թ.,
Ս. Էջմիածին